ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2014թ. ապրիլի 25 -ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցներ՝ հանձնաժողովի 3 անդամները:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Մելսիկ Հարությունյան:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց

Ռոմիկ Քոչարյանի /գ. Վերնաշեն/, Աշխեն Մաթևոսյանի /գ. Աղավնաձոր/ , Մարիամ Գրիգորյանի / գ.Արփի/ դիմումներն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

<u>ՈՐՈՇԵՑ</u>

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրանց ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Ռոմիկ Քոչարյանի և Մարիամ Գրիգորյանի վիրահատությունը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի միջնորդագրերն ուղղված ՀՀ առողջապահության նախարարին:
2. Մերժել քաղաքացի Աշխեն Մաթևոսյանի դիմումը, քանի որ վիրահատությունը կատարվել է մինչև հանձնաժողովի կողմից դիմումի քննարկումը:

Հանձնաժողովի Նախագահ՝ Մ. Հարությունյան

Քարտուղար՝ Ս.Շահբազյան